ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ.


**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**
**Բաց Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**


**Հաշվետվություն թիվ 151, 16.03.2017թ.**

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,760,731 հատ, | 40,000 հատ | 280.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Կարեն Հակոբյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ** | | 16 03 17 |
| **Զարուհի Մելքոնյան** | **Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ** | | 16 03 17 |
| **Սուրեն Կարապետյան** | **Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ** | | 16 03 17 |
| **Տիգրան Գալստյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 16 03 17 |
| **Կարեն Սարգսյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 16 03 17 |
| **Բագրատ Ճամպյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 16 03 17 |
| **Դավիթ Հարությունյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ** | | 16 03 17 |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Աշոտ Օսիպյան** | **Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն** | | 16 03 17 |

16 մարտի 2017թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բագրատաշեն մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017 թվականի մարտի 13-ի թիվ 05/01Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19  Հեռ.՝ (+37410) 54-78-95  Ֆաքս՝ (+37410) 54-78-94  Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102 - 05/01Լ
Դաս: ՀՊ
« 13 » մարտի 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^{6}$-ի 1-ին մասի ծը) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետի h) ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բանկի ԲԱԳՐԱՏԱՇԵՆ մասնաճյուղն ի սկզբանե ստեղծվել է Բանկի և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի միջև ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցներ տեղափոխող կամ մաքսային բրոքեր (միջնորդ) հանդիսացող անձանցից հարկերի, մաքսատուրքերի, մաքսավճարների, հաստատագրված վճարների հավաքագրման և բյուջե փոխանցման ծառայությունների մատուցման նպատակով կնքված պայմանագրի, ինչպես նաև տարածքային ցանցի և մանրածախ բանկային ծառայությունների մատուցման ընդլայնման նպատակով, սակայն հիմք ընդունելով ՊԵԿ-ի Գուգարքի տարածաշրջանային մաքսատան Բագրատաշենի մաքսային կետի պետ Ս.Մելիքսեթյանի 2017 թվականի մարտի 07-ի ելից թիվ 52 կից գրությունը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ին տրամադրված վայրում մասնաճյուղի առկայության անհրաժեշտությունը չգտնելու մասին, Բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հանձնարարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գործադիր տնօրեն Ա.Օսիպյանին ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ մասնաճյուղի գործունեության դադարեցման հետ կապված գործընթացը:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ մասնաճյուղի գործունեությունը դադարեցնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվության վերաբերյալ որոշման ընդունման հաջորդ օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ          Բարսեղ Բեգլարյան